

**Ոչ-բինար
Մաշառու (Նիդերլանդներ)
Մարիա Զաքարյան (Հայաստան)**

Ոչ-բինար սեռը սահմանվում է ես-ը կամ ինքնությունը հայրիշխանական ընկալման գենդերային բինար (կին - տղամարդ) սոցիալական կառուցվածքի հետ չասոցացնելով: Դա կարող է արտահայտվել տարբեր դերանունների հետ նույնանալով կամ այն սպեկտրի շրջանակում, որը կնոջ և տղամարդու մեջտեղում է, երբեմն անգամ բինար ինքնություններից մեկին ավելի հակված լինելով, քան մյուսին, մինչդեռ որոշ մարդիկ կարող են անհստակ լինել երկուսի մեջ: Ոչ-բինարը գենդերային քաղաքականության և սոցիալական ինքնության պատմության կարևոր մասն է, որտեղ այն ընդվզում է և մարտահրավեր է նետում գենդերային նորմերի գաղափարներին, ինչպես նաև դրա ֆիզիկական և հուզական դրսևորումներին:

Պատմության մեջ ոչ-բինար ձևերի և փորձառության բազմաթիվ օրինակներ կան, որոնք փոխանցվում են տարբեր տարածքների բնիկ գիտելիքի և մարդկանց միջոցով: Սա հաշվի առնելով՝ կարևոր է քննել այն փաստարկները, որոնք պնդում են, որ ոչ-բինար ինքնությունը զուտ ժամանակակից իրադրություն է: Արևմտյան բինար սեռերից անդին գենդերային արտահայտման պատմական փաստաթղթեր գոյություն ունեն: Քննելով գիտելիքի արարման ընթացակարգերը, մասնավորապես, գենդերային և գենդերի բինար դասակարգումը, հնարավոր է տեղափոխել կողավորման նախկին նահապետական պատկերացումները, որոնցում խիստ բինար դրսևորումներից դուրս մարդիկ մատնացույց են արվում և հաճախ (մասամբ) ջնջվում:

Ոչ-բինարը տերմին է, որը ստեղծվել է տղամարդու և կնոջ բինար սեռերից անդին սեռերը նույնականացնելու համար, այդուհանդերձ դրանով այն կարող է ամրապնդել բինարության ավելի խիստ գոյությունը: Սեռը դրսևորում է, որը պետք է բխի անհատից, այլ ոչ թե պարտադրաբար կառուցված կարգից: Բացի այդ, սեռականության և սեռի առանձնացումը միշտ չէ գենդերային ինքնության և դրսևորման ձևը: Այնուամենայնիվ, այս տեքստում այն ընտրվել է սեռի վրա կենտրոնանալու համար: Գենդերային կառուցվածքը տարբերվում է մշակույթից, գտնվելու վայրից և ժամանակաշրջանից կախված, և հաճախ (անգլոֆոն) լեզուն չի կարող ներառել սեռերի նրբությունները: Թեև ոչ-բինարը որպես տերմին կիրառելը կարելի է հասկանալ որպես գենդերային խիստ բինարության իդեալականացում, մենք գտնում ենք, որ ոչ-բինարը դեռևս օգտակար բառ է որպես ելակետ: Մենք այն կիրառում ենք որպես աշխատանքային տերմին, որը կարող է փոխվել և պետք է ճկուն մոտեցում լինի՝ նպատակ ունենալով բացահայտել սեռը արտահայտելու տարբեր ձևերի բազմազանությունն ու գեղեցկությունը ինչպես նաև դրա բազմատարրությունը: Այստեղ մենք ուզում ենք ընդունել, որ ոչ-բինար տերմինը ծավալուն և վիճելի է, սակայն շատ մարդիկ այն հարմար և իմաստ պարունակող են համարում: Մենք կիրառում ենք ոչ-բինար տերմինը տարբեր մշակույթներում սեռը քննարկելու համար որպես սեռի արտահայտման բազմաթիվ եղանակների համապարփակ տերմին: Սա բարդ որոշում էր, քանի որ ոչ-բինար բառը արևմտյան տերմին է, հետևաբար չի ներառում շատ մարդկանց, ավանդույթների և վայրերի սեռային ապրելակերպը: Այսպիսով, նպատակ ունենք սահմանափակել ոչ-բինար բառը սեռը որպես ամբողջություն քննարկելու և հայրիշխանական պատկերացումներից դուրս գոյություն ունեցող սեռին անդրադառնալու համար:

Թեման պատմականորեն և ժամանակակից հասարակության մեջ ուսումնասիրելու համար մենք օգտագործում ենք ակադեմիական հղումներ և հետազոտություններ՝ աշխարհում գենդերային ինքնությունների շրջանակ պատկերելու համար: Այնուամենայնիվ, ցանկանում ենք նշել, որ ակադեմիական հաստատություններն ունեն գաղութացման պատմություն և մաս են կազմում իշխանության ավելի մեծ կառուցվածքի, որտեղ տղամարդու և կնոջ բինար ընկալումից անդին գենդերային ինքնությունները հաճախ դիտվել են որպես տարօրինակություններ, որոնք պետք է հետազոտել կամ նույնիսկ վերացնել: Սա հաշվի առնելով օգտագործված հղումների քննադատական մոտեցում է կիրառվել: